

«Միկշին» ընկերությունը հիմնադրման օրվանից իրականացնում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր՝ միտված բարելավելու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Բազմաթիվ ծրագրերի և նախագծերի արդյունքում ստեղծվել են հազարավոր աշխատատեղեր, ներգրավվել տարբեր սոցիալական խնդիրներով մարդիկ, լուծում տրվել առողջապահական, սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների: «Միկշին» ընկերության նախագծերից է «Երագ» բնակելի թաղամասի կառուցումը, որն իր ճարտարապետական լուծումներով, որակային չափանիշներով, հարմարավետությամբ, գնային քաղաքականությամբ դարձել է Երևան քաղաքի այցեքարտերից մեկը: «Երագ» բնակելի թաղամասի կառուցապատման ընթացքում իրականացվել են ծրագրեր, որոնց շնորհիվ նորակառույց բնակարանը հասանելի է դարձել միջին եկամուտ ունեցող քաղաքացուն:

## « Հատուկ ծրագիր բժիշկների, լրագրողների և ՏՏ ոլորտի աշխատակիցների համար»

2018 թվականի դեկտեմբերի 1-ից «Երագ» բնակելի թաղամասում մեկնարկել է հատուկ սոցիալական ծրագիր լրագրողների, բուժաշխատողների, ՏՏ ոլորտի մասնագետների համար՝ լուծելու նրանց բնակարանային խնդիրը՝ ստեղծելով բոլոր բարենպաստ պայմանները հարմարավետ, մատչելի, նորակառույց բնակարան ունենալու համար:

**Հատուկ ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է՝**

### **Դիմում-հայտ**

**bnak.am** ինտերնետային կայքում սահմանված տիպային օրինակով դիմում-հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնել կառուցապատող «ՄԻԿՇԻՆ» ՍՊ ընկերությանը

- պահանջվող փաստաթղթեր՝
1. անձնագիր (և/կամ նույնականացման քարտ, պատճեն)
  2. աշխատանքի վայրից տեղեկանք (ներկայումս աշխատող և առնվազն 1.5 տարի աշխատանքային փորձ ունեցող )
  3. դիպլոմ (պատճեն)

### **Վարկունակության գնահատում**

Վարկունակության որոշման համար դիմել «Արդշինբանկ» ՓԲԸ կամ «ՄԱՅԿԸԴԵԴԻՏ ՈւՎԿ» ՍՊԸ (կամ Ձեր ցանկությամբ որևէ բանկ, վարկային կազմակերպություն) և ստանալ վարկունակ ճանաչվելու վերաբերյալ փաստաթուղթ՝ հիփոթեքային վարկի տրամադրման համաձայնության մասին:

Ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկը տրամադրվում է «Արդշինբանկ» ՓԲԸ և «ՄԱՅԿԸԴԵԴԻՏ ՈւՎԿ» ՍՊԸ-ի կողմից 30% կանխավճարի դեպքում և սկսած 10% կանխավճարից՝ երկրորդ գույքի գրավադրմամբ: Առավելագույն վարկավորման գումարը կազմում է 25.000.000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ: Ձեր նախընտրությամբ այլ բանկեր դիմելու դեպքում վարկավորումը իրականացվում է տվյալ բանկի կողմից առաջարկվող պայմաններով:

### **Ծրագրին համապատասխանելիության չափանիշները**

<<ՄԻԿՇԻՆ>> ՍՊ ընկերությունը ծրագրից օգտվելու ցանկություն հայտնած անձանցից համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո դրանք ամփոփում է, գնահատում ծրագրից օգտվելու իրավունք ունեցող անձանց ցանկը՝ ըստ վերը նշված չափանիշների և կազմում ծրագրին մասնակցող հավակնորդների ցուցակը:

### **Բնակարանների ընտրություն**

Բնակարանների ընտրությունը կատարվում է **bnak.am** կայքում օնլայն տարբերակով, որն իրականացվում է կայքում անձնական սենյակ մուտք գործելու միջոցով: Մուտքի ծածկանունը և ծածկագիրը ստանալու համար ծրագրի մասնակիցը <<ՄԻԿՇԻՆ>> ՍՊ ընկերության գրասենյակ է ներկայացնում կառուցապատողի հաշվին 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարման անդորրագիրը (ծրագրի վերջնական փուլում վիճակահանության արդյունքում բնակարան ձեռք չբերելու դեպքում վճարված գումարն էտ կվերադարձվի մասնակցին):

Ծրագրի վերջնական փուլում վիճակահանության արդյունքում բնակարան ձեռք բերելու դեպքում վճարված գումարն կհամարվի վճարման ենթակա կանխավճարի մի մաս

Ծրագրի վերջնական փուլում վիճակահանության արդյունքում բնակարան ձեռք չբերելու դեպքում վճարված գումարն էտ կվերադարձվի մասնակցին

Ծրագրի վերջնական փուլում վիճակահանության արդյունքում բնակարան ձեռք բերելու, բայց նախնական պայմանագրի կնքման առաջարկ ստանալուց և պայմանագիր կնքելուց հրաժարվելու դեպքում վճարված գումարն էտ չի վերադարձվի մասնակցին

## Ընտրված բնակարան

**Bnak.am** ինտերնետային կայքում մուտքագրելով ստացված ծածկանունը և ծածկագիրը համակարգը ծրագրի մասնակցին ներկայացնում է հասանելի բնակարանների ցանկ (կցված ավտոկայանատեղիով): Ծրագրի մասնակիցը պետք է ընտրի առնվազն 5(հինգ) բնակարան:

### Վիճակահանության մասնակիցներ

<<ՄԻՎՇԻՆ>> ՍՊ ընկերությունը ծրագրի մասնակիցներին ծանուցում է բնակարանների վիճակահանության անցկացման օրվա, վայրի և ժամի մասին, հաղորդագրություն ուղարկելով դիմում-հայտում լրացված էլ. հասցեին և հեռախոսահամարին, կայքում տեղադրված հայտարարության միջոցով:

### Վիճակահանությունն անցկացվում է հետևյալ կարգով՝

1) սպիտակ թերթիկի վրա նշվում է վիճակահանությամբ բաշխվող բնակարանի նախագծային համարը՝ ըստ կառուցման նախագծի, սենյակների թիվը.

2) թերթիկը ծալվում է երկու անգամ, կարվում է կարիչով և դրվում է թափանցիկ թմբուկի մեջ.

3) թմբուկը պտտեցվում է մասնակիցներից որևէ մեկի կողմից, և տվյալ բնակարանի հավակնորդները, ըստ իրենց ազգանվան ու անվան այբբենական հերթականության, մոտենում են թմբուկին և դրանից հանում մեկական թերթիկ.

4) վիճակահանությամբ բաշխվող բնակարանի հավակնորդ է ճանաչվում այն անձը, ով թմբուկից հանել է բնակարանի նախագծային համարով թերթիկը:

Վիճակահանության արդյունքներով որոշված հավակնորդին առաջարկ է ներկայացվում տվյալ բնակարանի և կցված ավտոկայանատեղիի Կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի ր դրամական միջոցների մի մասի (1%-) գրավի պայմանագիր կնքելու մասին, որն ստանալուց հետո մասնակիցը պարտավորվում է յոթ աշխատանքային օրվա ընթացքում լրավճարել բնակարանի և ավտոկայանատեղիի համար նախատեսված առաջին կանխավճարը (բացառությամբ նախապես վճարված 400.000 ՀՀ դրամը ):

### Գնորդի և կառուցապատողի հարաբերությունները

Հավակնորդի և Երևան քաղաքի Ադոնցի փողոցի NN 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների կառուցապատող <<Միկշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվում է կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի և դրամական միջոցների մի մասի (1%) գրավի պայմանագիր, որով կառուցապատողը պարտավորվում է իր սեփականությունը

հանդիսացող հողամասի վրա կառուցվող բազմաբնակարան շենքի կառուցման ավարտից հետո կնքել բնակելի նշանակության տարածքների և ավտոկայանատեղիի հիմնական առուվաճառքի պայմանագիր: **Հավակնորդի և կառուցապատողի միջև կնքվող բնակարանի և ավտոկայանատեղի կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի և դրամական միջոցների մի մասի (1%) գրավի պայմանագրի հիմնական պայմաններն են՝ միավորի գինը.** բնակարանի գրանցված մակերեսը բազմապատկած՝

1. ներքին հարդարմամբ 360.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացրած արժեքի հարկը

2. առանց ներքին հարդարման՝ արտաքին դռների և պատուհանների տեղադրմամբ, ավաղած պատերով, ցեմենտյա շաղախից հատակով՝ 335.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացրած արժեքի հարկը:

Շենքի կառուցման ավարտից հետո դրա ստորաբաժանված միավորների կադաստրային գրանցման փուլում չափագրման արդյունքներով յուրաքանչյուր Օբյեկտի գրանցված մակերեսը հնարավոր է տարբերվի ճարտարապետաշինարարական նախագծով արտացոլված նախագծային մակերեսից և նախագծային համարից, ըստ այդմ փաստացի գրանցված մակերեսը նախագծային տվյալներից շեղման դեպքում Օբյեկտի օտարման գինն ենթակա է վճարման փաստացի գրանցված մակերեսով՝ դրական տարբերություն առաջանալու դեպքում պետք է վճարի գնորդը, իսկ բացասական տարբերության դեպքում ավել վճարված գումարը կվերադարձվի գնորդին:

3. Ավտոկայանատեղի համար՝ 1 950 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

Ավտոկայանատեղի համար՝ 20% կանխավճար, իսկ մնացած 80% վճարվում է հավասարաչափ մինչև առուվաճառքի հիմնական պայմանագրի առարկայի հանձնում-ընդունումը: Հավակնորդների կողմից բոլոր վճարումները կատարվում են <<Միկշին>> ՍՊ ընկերության կողմից նախապես տրամադրված բանկային հաշիվներին:

### **Հիմնական պայմանագրի կնքման ժամկետը և դրա առարկայի հանձնումը**

Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի NN 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանները և ավտոկայանատեղիները <<Միկշին>> ՍՊ ընկերության կողմից առանձին փոստային հասցեով և վկայականով պետական գրանցման ենթարկվելուց հետո <<Միկշին>> ՍՊ ընկերությանը առաջին

կանխավճարը փոխանցելու օրվանից մինչև 36 ամսվա ընթացքում բնակարանների և ավտոկայանատեղիների հանձնում-ընդունում հավակնորդին և Կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի և դրամական միջոցների մի մասի (1%) գրավի պայմանագիր կնքելու օրվանից մինչև 40 ամսվա ընթացքում, անշարժ գույքերի առուվաճառքի հիմնական պայմանագիր կնքում՝ «Միկշին» ՍՊ ընկերության և հավակնորդի միջև:

Ներքին հարդարման նկարագիր	
միջհարկային բարձրություն	հատակ-առաստաղ 3.0 +/- 5սմ
հյուրասենյակ, ննջասենյակներ	<b>պատերը</b> ՝ լատեքսաներկում <b>առաստաղները</b> ՝ ներկում ջրաեմուլսային ներկով <b>հատակները</b> ՝ լամինատից
խոհանոց	<b>պատերը</b> ՝ լատեքսաներկում և մասնակի սալիկապատում <b>առաստաղը</b> ՝ ներկում ջրաեմուլսային ներկով <b>հատակը</b> ՝ սալիկապատ
սանհանգույց և լոգասենյակ	<b>պատերը</b> ՝ երեսպատում ջնարակված խեցե սալիկներով՝ առնվազն մինչև կախովի առաստաղի բարձրությամբ <b>առաստաղը</b> ՝ կախովի, ջրակայուն նյութերով, ներկառուցված լուսատուներով <b>հատակը</b> ՝ խեցե սալիկներ կամ կերամագրանիտ <b>կահավորանքը</b> ՝ ճենապակյա լվացարան և գուգարանակոնք, լոգախցիկի տակդիր, ցնցուղ, ծորակներ
օթյակներ և պատշգամբներ	<b>հատակները</b> ՝ կերամագրանիտե սալիկներով երեսպատում
դռներ և պատուհաններ	<b>ներքին դռները</b> ՝ ՄԴՖ-ից կամ համարժեք այլ փայտանյութից <b>մուտքի դուռը</b> ՝ երկաթյա հիմքով, երեսպատումը լաքապատված ՄԴՖ-ով <b>պատուհանները</b> ՝ մետաղապլաստե երկշերտ ապակեփքթեթով, առնվազն երեք խցիկով, պլաստմասսայե պատուհանագոգերով